



Վ Ա Հ Ր Ա Մ Փ Ա Փ Ա Ձ Յ Ա Ն
(1888—1968)

Հունիսի 5-ին, չորեքշաբթի օրը, ծանր հիվանդությունից հետո, Լենինգրադում վախճանվեց հայ բեմի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը՝ ՍՍՀՄ ժողովրդական դերասան, հասարակական գործիչ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Վահրամ Փափազյանը:

Ծանր, անփոխարինելի կորուստ կրեց սովետական թատերական արվեստը:

Վահրամ Փափազյանը ծնվել է Կոստանդնուպոլսում, 1888 թվականի հունվարի 6-ին: Սովորել է տեղի Եսայան վարժարանում և ապա՝ Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցում: Դեռ վաղ հասակից նրա մոտ ի հայտ է գալիս սեր արվեստների նկատմամբ և հակում՝ դեպի թատրոնը: Ի լրումն դրա նա 1908—1911 թթ. ուսանում է Միլանի գեղարվեստների ակադեմիայում: 1912 թվականին, դերասանական արվեստը կատարելագործելու նպատակով, Միլանի ակադեմիան Փափազյանին գործուղում է Փարիզ:

1913 թվականին Փափազյանը տեղափոխվում է Անդրկովկաս, ուր ելույթներ է ունենում Թիֆլիսի և Բաքվի հայկական թատրոններում:

20-ական թվականներին Փափազյանը վերջնականապես հաստատվում է մայր հայրենիքում:

Այնուհետև նա փայլուն ելույթներ է ունենում Սովետական Միության բոլոր հայտնի բեմերում և լայն ժողովրդայնություն ու ճանաչում գտնում ամենուրեք: Նրա արվեստին երկրպագու հասարակայնությունը իր հիշողության մեջ դեռ թարմ է պահում սովետական բեմում նրա կերտած Դոն ժուանը, Սիրանո դե Բերթերակը, Կորրադոն, Համլետը, Օթելլոն, Լիր Արքան, Արքեմիդը, Պրոտաստվը, Մեք Գրեգորը և այլ կերպարներ:

Իր կյանքի վերջին տարիներին Վահրամ Փափազյանը ճանաչելի դարձավ նաև գեղարվեստական գրականության ասպարեզում: Նրա գրչի արգասիքը հանդիսացող



«Հետադարձ հայացք», «Արտիստի կյանքը», «Արտիստ պարտքը», «Աշխարհի բեմերում», «Իմ Օթելլոն» գրքերը արժանացան ընթերցասեր հասարակության խանդավառ ընդունելությանը:

Իր հայրենակներ գործունեության համար սովետական կառավարությունը մեծատաղանդ արվեստագետին արժանացրել է բարձր պարգևների:

Վահրամ Փափազյանի թաղումը կատարվեց հունիսի 10-ին: Նրա աճյունը ամփոփվեց քաղաքային պանթեոնում, Կոմիտասի անվան զբոսայգում, որտեղ հանգչում են հայ արվեստի ու մշակույթի ականավոր ներկայացուցիչները:

Հավերժ փառք հայ բեմի շնորհաշատ վարպետի հիշատակին: